

19
0- ԵՐԼՈՎԱԿԻ

ՄԱՆԿԱԿԱՆ
ԱԿՈՒՄԲՆԵՐԸ
USOFՔՅՈԼՄՈՒՄ

Թեարգիւմնելից Ար. 3.

374.2
0-89

Ք. Ե. Ե. Խ.

Տպարան՝ ՊՐՈՊՐԵԼՈՒ ՀԱՆՐԵ, Գլուխան, Տ. 7.

1969

374.2

0-89

այ

370

1860-ԱՐ

Ա. ԵՐԼԱՎՈՒՔ




ՄԵՆԿԵՐԸ ԱԿՈՒՄԲԵՐԸ

ԱՏՕՔՆՈՂՄՈՒՄ

1003
14926

մարզական տաղավարություն
Թարգմանեց Ա. Յ. 1923 թ. 11/11



Թ Ի Ց Լ Ի Ս
Տպարան „ՊՐՈԳՐԵՍ“ Հանկ., Վելեսմին., № 7.

1909

2 SEP 2013

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Կեանքի մէջ երեացող հասարակական բնոյթ կրող
բացասական երևոյթների դէմ ամեն տեղ և ամեն ժամա-
նակ անընդհատ և յամառ կուր է մղել մարդկութեան
գիտակից մասը (անհատներ, խմբակցութիւններ և թէ
ամբողջ հասարակութիւններ)՝ զինած համապատաս-
խան զէնքերով։ Այդ կուր անհրաժեշտ պահանջ է
դառնում մանաւանդ կրթւած հասարակութիւնների հա-
մար, երբ բուն կրթութեան հետ միասին, պրօգրէսիւ
կերպով, մուտք են գործում և կեանքի բացասական
կողմերն աւելի կատարելագործւած եղանակով։

Բարեբախտաբար չկայ չարիք, որի դէմ զինւած
չլինի բնական ընդունակութիւններով օժտւած մարդը,
որը յաւակնութիւն ունի յաղթող հանդիսանալ և շատ
դէպքերում էլ արդէն յաղթող է գտնւել։ Զանազան
բարեգործական և կրթական ընկերութիւններ ու խրճ-
բակցութիւններ գործել և գործում են հասարակութեանը
հարւածող չարիքների դէմ և հովանաւորել են բախ-
տից հալածւածներին, ազատելով այդպիսիներին կո-
րըստեան վտանգից յօգուտ հասարակական բարօրու-
թեան։

Ի միջի այլ չարիքների՝ հասարակութիւնների հա-
մար պակաս վտանգաւոր չեն եղել և գողութիւնն ու
աւազակութիւնը, որոնցից տուժել են, մանաւանդ վեր-
ջին ժամանակներս, հասարակութիւնների թէ նիւթա-
կանը և թէ բարոյականը։

Հասարակական այդ չարիքների դէմ՝ ինչպէս
անցեալում նոյնպէս և ներկայում՝ գործադրուել
և գործադրում են միջոցներ, որոնց մէջ առաջնա-
կարգ տեղ են բռնում բանտերը, որոնք, գժբախ-
տաբար, մինչև օրս ոչ միայն անզօր են եղել չարիքը
վերացնելու, այլ ընդհակառակը՝ կարծես թէ աւելի
նպաստել են չարիքի տարածւելուն և կատարելագործ-
ւելուն։ Այս է ասում մեզ իրականութիւնը։ Գողու-
թիւնն ու աւազականութիւնը ոչ թէ միայն արմատա-
խիլ չեն լինում հասարակական միջավայրից, այլ և
արմատաւորում և աւելի հաստատուն հող են գտնում
սրանում, թունաւորելով հասարակութեան մատաղ
սերնդի սրտերը։

Ամենուրէք արդէն նկատւում է այդ տիսուր իրուցութիւնը. գողութեամբ և աւազակութեամբ սկսել են պարապել և նրանք, որոնք հասարակութիւնների ապագան են լինելու—մանուկները, որոնք՝ փոխանակ դըպոց գնայում՝ գործած յանցանքի համար բանտերն են գնում։ Այսպէս օրինակ՝ Շվեդիայում տարեկան 30,000 դաշտողների կէսը մատաղ սերնդին է բաժին ընկենում։ Մեր երկրում ևս նոյն կործանիչ հոսանքը սկսել է նկատելի չափով առաջ գնալ, որի նկատմամբ մամուլի մէջ արդէն բոլորներ են լսում. և այդ կողմից առաջին օրինակը տևել է Բագուն, որի, արդինարերական քաղաքին յատուկ, քասային կեանքը նպաստող պայման է հանդիսանում այդ բանին։

Իրականութեան այս տիսուր պատկերին ականատես հասարակութեան ողջմիտ մասի վրայ իրօք մեծ պարտ է դրւում լուրջ ուշագրութեան առնելու հասարական կեանքի այդ հիւանդու կողմբ։

Այս կողմից շատ լուսաւորւած երկրների հասարակութիւններն արդէն օրինակելի տեղ են բանել. Նրանք հասարակութեան այդ բացասական կողմն վերացնելու համար ոչ թէ «յանցանքի համար պատժում են», այլ աշխատում են «յանցանքի աղբիւրը չորացնել», սրանք ոչ թէ բանտերով են ուզում զրա առաջն առնել, այլ մի նոր հաստատութիւններով, որոնք կոչում են «Փողոցային մանուկների ժողովարաններ»։

Այս հիմնարկութիւններն են ահա, որ կոչւած են գպրոցի հետ միասին ձեռք ձեռքի տւած՝ ապագայ հասարակութեան համար գործունեայ և պիտանի անդամներ պատրաստել. Այսպիսի հիմնարկութիւնների ծառալումն մեր երկրում ևս ցանկալի և անհրաժեշտ է. ուստի այս բրոշիւրի ուսւերէնից հայերէն թարգմանութիւնը թերես նպաստէ այդպիսի հիմնարկութիւնների գաղափարի տարածման մեր մէջ և, ինչպէս այդ տեղի է ունեցել Շվեդիայում, ուր այդ գաղափարը մուտք է գործել Ամերիկայից և բազմաթիւ հետևողներ գտել։

Մ. Յ.

Մարտի 8-ին 1909 թ.

Թիֆլիս



ԿՈՒՆԴԱՀՈԼՄԻ ԺԱՂԱՎԵՐԱՆԻ

I

—Կարելի է հետաքրքրւում էք դուք աղքատ մանուկների և պատանիների ժողովարաններով,—հարցըին ինձ հասարակական աշխատանքի կենդրուական միութեան մէջ, որտեղից ես արդէն առիթ էի ունեցել բաւական շատ գնահատելի ցուցումներ և տեղեկութիւններ ստանալ:

—Ի հարկէ, էլ ինչ ասել կուզի. միթէ դուք Ստօքանում արդպիսի ժողովարաններ ունէք։

—Այս, այժմ տղաների և աղջիկների համար միքանի ժողովարաններ ունենք։ Մի այդպիսի ժողովարան գտնում է քաղաքի կունգսհօլմ մասում, ուր կան շատ գործարաններ և ուր ապրում է աղքատութիւնը։

Ինձ տիին մի տոմսակ այդ ժողովարանի հիմնադիր տիկ. Սեսիլիա Միլովի անունով, որի հսկողութեամբ ժողովարանը օրինակելի էր գարձել։

Ես չուզեցի յետաձգել այդպիսի հետաքրքիր հիմնարկութեան հետ ծանօթանալը և հէնց նոյն երեկոյեան քաղաքային էլէկտրագարշը, երկար պտոյտներ անելուց յետոյ, հասցըեց ինձ քաղաքի կունգսհօլմ կոչւած մասը՝ հէնց ժողովարանի բնակարանի գլխաւոր մուտքին։

Ժողովարանը գտնուում է մի մեծ շինութեան երրորդ յարկում, փողոցի կողմից ընդարձակ և շքեղ մուտքով։

Ժողովարան մտնելով՝ այնտեղ ոչ ոքի չգտայ. ինձ դիմաւորեց մի տասնեհինգ տարեկան պատանի, որ քաղաքավարութեամբ առաջնորդեց դէպի մի ընդարձակ սենեակ, իսկ ինքը զնաց տիկ. Միլովին իմաց տալու օտար հիւրի գալուստը:

Այն սենեակը, ուր առաջնորդեցին ինձ, բաւականին մեծ էր և ակներև ծառայում պարապմունքների և դասախոսութիւնների համար:

Դուն դիմաց պատի մօտ, պատւանդանի վրայ դրած էր ամբիոն, իսկ սենեակի երկու կողմերին՝ պատերի երկարութեամբ, ձգւած էին սև ծածկոցով պատած երկու մեծ սեղաններ, որոնց երկու կողմը դրած էին երկար նստարաններ և աթոններ:

Պատից կախւած էին, բացի միջակ մեծութեան գրատախտակից, մի շաբք գեղեցիկ շըջանակների մէջ սարքած լաւ նկարներ և պատկերներ, որոնց մէջ էին Տօլստոյի ու Անդերսէնի պատկերները, իսկ մնացածները շվեդացի ուսումնականների և բանաստեղծների պատկերներ էին:

Ես շատ չսպասեցի. յայտնւեց տիկ. Միլովը, արտաքինով մի շատ համակեր կին, որը, ինչպէս երեւում էր, ամբողջ նոգով նւիրած էր իրեն համար սիրելի գործին. Մենք ծանօթացանք. ես, ի հարկէ, սկսեցի հարցերը հարցերի հետեւց թափել նրա վրայ, ուրոնց նա հետզհետէ ոգեսրւելով մանրամասն ու հետաքըրքութեամբ պատասխանում էր:

Տիկ. Սեսիլիա Միլովն ամենից առաջ պատմեց, որ ժողովարանի գաղափարը վերցրել է Ամերիկայից, որտեղ շատ անգամ է եղել ինքը և ունի բազմաթիւ ծանօթներ և կապեր:

Ես շարունակ առիթ եմ ունեցել նկատելու այդ կապը բազմազան հանգամանքներում: Ակներւ է, որ իրար մօտենալու և փոխադարձ համակրամքի խոր

զգացում կայ գործունեայ եանկի*) և վստահութեամբ ու տոկունութեամբ լի եռանդուն շվեդացու մէջ:

Այսպէս, ուրեմն, ժողովարանի գաղափարը Ամերիկայից է մտած Ստօքնօլմ:

Տիկ. Միլովի անդրովկեանոսեան բարեկամների մէջ կար մի մարդ, որի անձնաւորութիւնն այնքան նշանաւոր է, որ աւելորդ չի լինի միքանի խօսք ասել սրա մասին:

II

Թովմաս Շիւն՝ Բոստոնի մօտ գտնւող Բորդէնի գործարանում աշխատող՝ բանւոր ամուսինների որդի էր: Նա տասներկու տարեկան հասակից աշխատել է նոյն գործարանի ջուլհականոցում:

Երիտասարդ ժամանակ նա մտնում է երիտասարդների ըրիստոնէական մլութեան մէջ և սկսում է իր ազատ ժամանակը նւիրել փողոցային երեխաներին: Նրան միշտ շըջապատում են այդպիսի մանուկները և նա շատ սովորական ընկեր է դառնում նրանց համար:

Թովմաս Շիւն 1890 թ. փետրւարին սկսեց փողոցային մանուկներին հաւաքել իր նեղլիկ սենեակը, ուր նրանց հետ պարապում էր ընթերցանութեամբ, պատմում էր հետաքրքիր արկածներ, մասնակցում էր նրանց զանազան խաղերին: Սկզբում նրա մօտ յաճախում էին ընդամենը վեց հոգի, բայց թովմաս Շիւնի մօտ անցկացրած երեկոների մասին նրանց արած պատմութիւնները, ինչպէս բոցավոող կայծեր, շուտով ներգործում են իրենց փողոցային բարեկամների վրայ, և ըոլորը լցւում են թովմաս Շիւնի սենեակը, ցանկանալով նրա մօտ ուրախանալ:

Հարկ եղաւ մի սենեակ վարձել, իսկ յետոյ էլ

*) Այսպէս են կոչում ամերիկացիներին:

երկուսը: Փողոցային մանուկների ժողովարանն աճելով աճում էր, այնպէս որ վերջը վարձեցին մի ամբողջ բնակարան:

Գործարանատէր Բօրդէն անտես չարեց այդպիսի գործունեայ մարդուն. սկզբում հետևում էր նրա աշխատանքներին և ժողովարանին արած երրեմնակի նույներով, թէ զրամով՝ որպէս բնակարանի վարձ և թէ զրքերով, թերթերով և խաղալիքներով, նեցուկ էր դառնում նրա գոյութեան:

Վերջապէս երբ ժողովարանը բաւական ընդարձակեց և ոչ մի կասկած չէր կարող լինել ոչ ժողովարանի կարևորութեան ու անհրաժեշտութեան և ոչ էլ Թովմաս Շիւյի, որպէս աշքի ընկնող դաստիարակի, բարձր նշանակութեան մասին, այն ժամանակ Բօրդէն ժողովարանի շէնքի կառուցման համար նւիրեց 250 հազար ըուրիփ:

Պատրաստ էր գեղեցիկ, մուգ աղիւսից կատուցած շէնքը. կատարեցին բացման հանդէսը և արձակ ու յարմար կերպով, իրենց բոլոր բաժանմունքներով տեղաւորւեցին նրա մէջ:

Ներկայում Թովմաս Շիւյի ժողովարանն ունի երկու հազար անդամ՝ 8—20 տարեկան հասակի, բոլորն էլ բանուոր ու աղքատ մարդկանց զաւակներ, ուրոնց համար իրենց տները նեղւացք են և տաղտկալի, և որոնց ժողովելու ու խաղալու նախկին միակ տեղը փողոցն էր:

Թովմաս Շիւն այժմ ժողովարանի նախագահն ու կառավարիչն է, որի համար ստանում է նոյն շէնքում բնակարան և 1500 ըուրիփ սոճիկ: Նա մենակ չէ՝ ունի երկու օգնական, և սրանք երեքով էլ կառավարում են ժողովարանը, այն է՝ գործի տնտեսական մասը: Ժողովարանի տարեկան ծախքն է մոտ 9000 ր:

Ժողովարանի անդամներն իրենց ներքին գործերի կառավարութեան մէջ ինքնավար են, ունեն ընտը-

ւած խորհուրդ, որի վճիռներին էլ ենթարկուում են: Ինքնավարութիւնը լիակատար է, զերծ ամեն ճընշումներից, հիմնւած ժողովրդապետական սկզբունքների վրայ:

Հարուստ ընտանիքների դաստիարակւած մանուկներին ժողովարանի անդամ չեն ընդունում, այլ միայն փողոցային, գուեհկացած, խարգախ, հայհոյանքըրերի, տուր ու գմփոցների սովոր, հայհոյելու և թակելու համար աչքաբաց մանուկները կարող են ժողովարանի անդամ դառնալ: Որքան աւելի է մանուկը երեսի վրայ թողնւած, որքան վատթար են նրա ընտանեկան պայմանները և աւելի է վայրենացած թէ բարոյապէս և թէ ֆիզիկապէս, այնքան աւելի թանգ է այդպիսին Թովմաս Շիւյի համար և հիւրասիրաբար են բացւում այդպիսի մանկան առաջ մեծ և մոյգկարմիր տան գոնքները: Այդպիսի մանկան համար այնտեղ պատրաստ են տաքութիւնն ու լոյսը, ընկերները ուրախութիւնը, կարեկցութիւնն ու փաղաքշանքը: Յատկապէս փաղաքշանքներով են ընդունում փոքրիկներին, որոնց հոգում գեռ չեն արմատաւորւել պախարակելի սովորութիւնները. այդպիսիներին խնամում, գըգում և մայրական հոգացողութեամբ հետևեւմ են:

Թէպէտ 10 տարի շարունակ, նոր շէնքը տեղափոխւելու օրից սկսած, այդ շէնքով են անցել մոտ 400 հազար մանուկ, այնուամենայնիւ այդքան ժամանակւայ ընթացքում ոչ մի ապականութիւն ու գողութեան գէպքեր տեղի չեն ունեցել. այդ ժամանակամիջոցում միակ նկատւած յանցանքն այն է եղել, որ մանուկներից մէկը պատի կամ կահկարասու վրայ փորագրել է իր անունը: Մինչդեռ ժողովարանի արդ ու զարդը կարելի է հարուստ համարել և մինչև անդամ՝ շքեղ, եթէ համեմատելու լինենք այն չքաւոր. և աղքատութեան հետ, որոնց մէջ մեծացել են նրանք: Գրքերն ու խաղալիքներն անդամ անվաս են մնացել, երբէք չեն գո-

դացւել գնդակի և մատիտի նման հրապուրիչ իրերը։ Հաւատարմութիւնն ու ինքնավարութիւնն է այն կախարդական ոյժը, որ թագաւորում ու հրաշքներ է կատարում այստեղ։ Թովմաս Շիւն իրեն համար սկզբունքը է դրել, որ ժողովարանում կարելի եղածին չափ քիչ կանոններ լինեն։ Մանուկներին չեն լրտեսում, նրանց երբեք չեն հայնոյում, ժողովարանն ամբողջովին նրանց տրամադրութեան է թողնւած և նրանք այստեղ կատարեալ տէր են, որոնց անպայման հաւատում են։

Դժւար չէ նախատեսել, թէ ինչպիսի ուժգին, վերածնիչ և ողմորիչ ազդեցութիւն են գործում այդ հոյակապ տան մէջ տիրող հաւասարութիւնը, ազատութիւնը, մշտական փաղաքշանքն ու բարեսրտութիւնն այն մանուկի և պատանու հոգու վրայ, որոնց անխնայ ծեծում ու արհամարհում էին, որոնք ամօթխածութեամբ յուշաբերում են, թէ ինչպէս իրենց ձեռքերը տանում էին օտարների գրպանները, ինչպէս կոնծում էին մինչև ազգայնանալը և հաճոյք էին գտնում ընտրովի հայնոյանքներ տալու մէջ։

Այստեղ, այս էլէկտրական լոյսով ողողւած հրաշալի տանը, նա իրեն մի ուրիշ աշխարհումն է զգում և հէսց ինքն էլ վերածնուում՝ մի ուրիշ բան է գտնում։

Մուտքի մօտ տախտակի վրայ գրւած են ժողոզովարանի համառօտ կանոնները.—Արգելւած է հայնոյել, թքել, ծխել և հարբած ներս մտնել։ Այս կանոններ խախտող անդամն՝ ընկերների որոշմամբ պատժում է. որպէս պատիժ գործադրուում է մի շարաթով ժողովարանից հեռացնելը, որ սակայն պատժւածն անկարող է լինում տանել և երեք օրից յետոյ, սովորաբար, արտասաւթոր աշքերով գալիս ներողութիւն և ժողովարան յաճախելու թոյլտութիւն է ինդրում։

Ամսական անդամագնարն է 50 կոպէկ. թէպէտ համեմատաբար շատ է այդպիսի ամսագնարը, մաս-

ւանդ մեր ոռւսաստանցիներիս տեսակէտով, այնուամենայնիւ անդամների թիւը շարունակ աճում է, այնպէս որ հարկ է լինում ընդունելութիւնը սահմանափակել 2000 թւով, բնակարանում տեղ չլինելու պատճառով։ Իսկ նրանց, որոնց մերժում են, ցոյց են տալիս ուրիշ ժողովարան, ուր կարող են անդամ լինել։

Թովմաս Շիւյի ժողովարանում հիմնւած է խնայողական դրամարկլ։ Զէ որ ժողովարանի անդամների մէջ քիչ չեն լրագրավաճաններ, կօշիկ մաքրողներ և այլ մասն զբաղմունքներ ունեցողներ, որոնք իրենց բաւարար աշխատանքի աւելորդ կոպէկները կարող են ահ օրւայ համար յետ ձգել։

Լի օրերին ժողովարանի գոները բացւում են՝ երեկոյեան ժամը 7-ին, իսկ կիրակի օրերը՝ շատ վաղ. ժամը 10-ին ամենքը ցրւում են և էլէկտրականութիւնը հանգչում է։

Ժողովարանի առաջին կանոնն ասում է. «Ժողոզովարան մտնելիս գլխարկդ վերցրու»։ իսկ երկրորդը՝ «Ոչ ոք, նախ քան ձեռներն ու երեսը լաւ լանալը, իրաւունք չունի ձեռք տալու զրքերին, խաղալիքներին և գործիքներին»։

Այս պատճառով ժողովարանի իրաքանչիւր այցելու նախ և առաջ գնում է ներքին յարկը՝ լւացւելու։ Այստեղ ցանկացողների համար ամեն բան պատրաստ կայ—միշտ մաքուր ու պարզ հոսող ջրով տւազանալու համար, 20 հատ ջրցիներ, հագնելու 20 մասն սենեակներ, որոնց մէջ կան սառ և տաք ջրերով լացարաններ։

Ժամը 7-ին այդ ներքնայարկում ասեղ ձգելու տեղ չի լինում, թէպէտ խիստ հետեւում են կարգապահութեան. լսելի են լինում ջրի չփչփոցը, խօսմկցութիւնների ու ծիծաղի ձայներ։ Ապա լացարանը դատարկւում է—բոլորը բարձրանում են վերև և մտնում զանազան տեղեր՝ արհեստանոցներ, զասարաններ կամ

դահլիճները. ընթերցանութեամբ պարագողները մշտնում են գրադարանն ու ընթերցարանը, բիլեարդի սենեակից լսելի է լինում գնդակների չըխկոցը, մարմամարզութեան դահլիճից՝ մարմնամարզական խաղերի ձայները:

Շէնքի մէջ տեղում, առաջին յարկում, գտնում է մի մեծ դահլիճ 600 ունկնդիրների համար. այդտեղ դասախոսի համար շինւած է մի առանձին բարձր տեղ, որը կարելի է և ըեմ դարձնել:

Դահլիճի կողքին գտնում է գրադարանը, որը երիտասարդ ընթերցողների համար ունի 2000 հատոր գիրք և մօտ 25 թերթ. միւս կողմից բիլեարդի սենեակն է, որտեղ դարսած են 4 բիլեարդի սեղան. այս սենեակում կան և զանազան խաղերի պարագաներ—շախմատներ, պատկերախաղեր և այլն: Ժողովարանում արգելւած է թղթախաղը, ինչպէս և ամեն տեսակ փողով խաղեր:

Երկրորդ յարկում գտնում են մարմնամարզութեան դահլիճը և պարագմունքի դասարանները: Այստեղ իրենց նիստերն են ունենում աւագ անդամների խմբակները, որոնք առանձին առանձին վերցրած փոքրիկ ժողովարաններ են ներկայացնում:

Աւելի բարձր, գտնում են կէղի խաղի վայրը և տպարանը, իսկ ներքին յարկումն են դարբնոցն ու աշխատանոցը:

Երեկոյեան զբաղմունքները բազմազան են, բայց պարտաւորեցուցիչ չեն. այլ ամեն մի անդամ իր ձաշակի ու ցանկութեան համաձայն ընտրութիւն է անում այդ զբաղմունքների մէջ: Բոլոր պարագմունքների համար կան առանձին առանձին ուսուցիչներ, այսպէս՝ ձեռարւեստի (սլոյդ), տպարանական գործի, զամբիւղներ հիւսելու, նկարչութեան, հաշւապահութեան, մարմնամարզութեան և լողանալու համար. ամեն մէկը գրւում է այն բաժանմունքում, ինչով ու-

զում է պարագել: Բոլոր 14 տարեկանից բարձր անդամները կազմում են հրացանաձիգների միութիւն: Ժողովարանում կան երգեցողութեան և երաժշտութեան սիրողների խմբեր, ինչպէս և մի առանձին խումբ, որ պարագում է դասախոսութիւններով:

Ամիսը մէկ անգամ կարդացւում են հանրամատչելի դասախոսութիւններ մոգական լապտերով բացատրուած, իսկ տարենը մէկ անգամ տրուում են ներկայացումներ, և երբեմն էլ համերգներ:

Անդամներն երբեմն երբեմն երեկոյին երեկոյին երեկոյին սարքում իրենց քոյրերի համար, այսպիսի դարձութիւնների համար արած ծախսերն իրենք են հոգում:

Ժողովարանն ունի իր երկրագործական գաղութը, ուր ուղարկում են հիւսանկութիւնից կամ աշխատանքից թուլացած մանուկներին կազզուրւելու համար, որոնք գաղութում 2-3 ամիս հնարաւորութիւն են ունենում առողջապահական պայմաններում հանգիստ կեանք անցկացնել:

III

Ամիսիկայում աղջիկների համար էլ այսպիսի ժողովարաններ գոյութիւն ունեն: Ֆօլլ-Ռիվերում, որտեղ Թովմաս Շիւն հիմնեց մանուկների ժողովարանը, գոյութիւն ունի մի ուրիշ նշանաւոր հիմնարկութիւն տեղացի աղջիկների և գեռահասների համար: Այդ հիմնարկութեան գլուխ է անցել ամերիկացի հարուստ օրիորդ Մէրի Շոուն, որը իր սրտին մօտ գործի համար չէ խնայում ոչ ժամանակը, ոչ միջոցները և ոչ էլ ոյժերը:

Այստեղ գործարանի բանուրուհիները նոյն գւարձութիւններ, յարմարութիւններ, փաղաքանքն ու օգտակար տեղեկութիւններն են ստանում, ինչ որ մանուկները Թովմաս Շիւյի ժողովարանում: Աղջիկները ի-

րենց ցանկութեան համաձայն, սովորում են տանտիկ-նութիւն, խոհարարութիւն, կար ու ձե, գլխարկների նորոգութեան արհեստ: Միքանի երկոներ նուրբում են բացառապէս խաղերին և զւարճութեան, մարմնամարդութեան, պարերին և երգեցողութիւն:

Աղջիկների այս ժողովարանն ևս բաց է լինում երեկոյեան 5—10 ժամը, անդամավճարն է 50 կոպէկ, բացի այդ ժողովարանի բոլոր ծախսերն էլ անդամուհիները բաժանում են իրենց մէջ:

Աղջիկներն ունեն իրենց ամարային գաղութը, որտեղ առանձին սիրով գնում են նրանք ջուհականցների 2700 մեքենաների խլացուցիչ աղմկից հանգստանալու համար:

Ամերիկայում, վերջին տեղեկութիւնների համաձայն, երկու սեռի այդպիսի ժողովարաններից իւրաքանչիւրում անդամների թիւը 2 միլիոնից պակաս չէ. նրանց հասակը 10—20 տարեկան է: Մանաւանդ տղաների ժողովարաններ շատ կան Նիւ-Յորկում, որտեղ բանտոր դասակարգի մանուկներից 300,000-ից աւելի անդամներ կան: Երբ միջոցները չեն ներում ժողովարանի համար առանձին բնակարան վարձելու, այդպիսի դէպքերում օգտում են զպլոցական շէնքերից: Իւրաքանչիւր ժողովարանում անդամնառ լինում են հետարւեստի և մարմնամարզութեան համար դահլիճներ, մէկ, երբեմն երկու, ամեն տեսակ զրգերով ու թերթերով հարուստ զրադարան, որտեղից օգտում է երիտասարդութիւնը:

Ժողովարանները լինում են—բազմանդամ և սակաւանդամ. առաջիններում անդամների թիւը համառ է 1000—5000, իսկ երկրորդներում՝ 6—20 հոգու, այս երկու կարգի ժողովարաններն էլ ունեն իրենց կողմնակիցները: Մեծ ժողովարանների գործունէութիւնն աւելի բեղմնաւոր է լինում, երբ նա մէջ բաժանում լի բեղմնաւոր է լինում, երբ նա մէջ բաժանում լի խմբերի, իսկ փոքր ժողովարանները կենդանի:

Պարերութեան մէջ մտնելով մեծ ժողովարանների հետ, խիստ ընդարձակում են իրենց գործունէութիւնը: Թովմաս Շիւն, տիկ. Միլովին զրած ընդարձակ նամակում, գեղեցիկ կերպով խօսում է մանուկների և գեռահասների համար այդպիսի ժողովարանների ունեցած նշանակութեան, նրանց ներքին կազմակերպութեան և ուղղութեան մասին:

«Փորձեցէք Շվեյչիայում էլ մեր ժողովարանների նման հիմնարկութիւններ ունենալ: Մեր օրերի գլխաւոր յատկանին է այն մեծ և ամեն ինչ կանող ձըգուումը, որ գրդում է բոլորին գէպի ազատութեան: Մենք բոլորս աշխատում ենք քաղաքական և կրօնական ազատութիւն ձեռք բերել իսկ մանուկները ձգտում են ազատւել այն բոլոր ճնշումներից և ոստիկանական հսկողութիւնից, որոնց ենթակայ են իրենք թէ ընտանիքում, թէ զպլոցում և թէ դուրսը: Ճընշած մանկան մէջ մարում են զւարճութիւնը, ծիծաղը, կատակը և հրապոյը—ուրիշ խօսքով, երբ մանուկը իրեն համար անհրաժեշտ ազատութիւնից զրկում է, այդպիսով նա հոգեպէս մենում է: Մեր գպլոցներում և ընտանիքներում արգելած բաներ, սահմանափակումներ և կանոններ խիստ շատ են: Մանուկներին տէք ինքնավարութիւն, որովհետեւ ինքնավարութիւնը բարձրացնում է նրանց մէջ սեփական արժանապատութեան զգացւումը և բարոյական ոյժը:

Ի հարկէ, մեծերի համար աւելի հեշտ է մանուկի առաջ որոշ արգելքներ զնել, քան թէ նրան հետաքրքիր զբաղմունքներ տալ և զրթեցնել նրա երեակայութիւնն ու հարցամիրութիւնը. այդպիսով ինչ ենք տեսնում մենք—ամեն մի մանուկի մէջ ամբարւում է եռանդի պաշար, որը մնում է անզործազրելի և կամ անհետանում, կամ թէ չէ յանցաւոր ուղղութիւն ստանում. այսպէս լինելուց յետոյ ահա, մեծերը նոր սկըսում են զանգատւել ժամանակակից կեանքի ապականութեան մասին. իսկ յանցաւոր մանուկին փակում են ուղղիչ ապաստարաններում:

Ժողովարանում՝ մանուկների յառաջադիմութեան գործը կախուած է կառավարչից. նա պէտք է նրանց աւագ եղբայրն ու բարեկամը լինի. նա պէտք է լաւ ըմբռնի նրանց ճաշակը, պահանջները, ընդունակութիւնները և ըստ այնմ էլ իւրաքանչիւրին իրեն համապատասխան պարապմունք տայ. նա պէտք է մանուկներին ներշնչի այն հասկացողութիւնը, որ ինքը վերջնականապէս որևէ պարապմունք նրանց վզին չէ փաթաթում, այլ որ իրենք պէտք է փորձեն ամեն մի պարապմունք և հաւանածով էլ զբաղեն: Անպայման արդարութիւնը պէտք է լինի նրան առաջնորդող սկզբ-բունքը. նա պէտք է քիչ խոստումներ անի, իսկ աւած խոստումներն առյապաղ կատարի: Նա պէտք է իր փոքրիկ բարեկամներին այցելէ աներում, դպրոցներում և նրանց հետ միասին դատուի դատաւորի առաջ:

Ժողովարանը կիրակնօրեայ ուսումնարան չէ, ուշըն և այնտեղ կրօնական ճնշում տեղի չպէտք է ունենայ:

Թող ձեր ժողովարանի պատերին չինեն Աստա-ձանչից վկայութիւններ, աղօթքներ և սազմուներ: Խուսափեցէք մանուկներին սիրող Մեծ ուսուցչի անունը և անտեղի յիշելուց. մի մոռանաք, որ սրբութիւնների անունները շարունակ լսելով, մանուկները ձանձրանում են և փողոցային մանուկները կարող են ժողովարանից փախչել: Իսկապէս իւրաքանչիւր մանկական լաւ ժողովարան միմիայն քրիստոնէական սիրոյ վրայ պէտք է հիմնաւած լինի:

Որքան շատ են տարածում փողոցային մանուկների ժողովարանները, այնքան պակասում է ուղղիչ ապաստարանների և բանտերի թիւը: Կար ժամանակ, երբ ասում էին. «Յանցանքի համար պէտք է պատժել», իսկ մենք ասում ենք. «Օքնեցէք մատաղ սերունդին, որպէսզի չարագործները վերջանան»:

Թովմաս Շիւն, որպէս գործնական եանկի,

մօտաւոր հաշւով ցոյց է տալիս, որ տարեկան 4000 րուբլի նախաճաշով կարելի է միքանի հազար մա-նուկների համար մեծ ժողովարան կազմակերպել:

Նա ծախսերը բաժանում է երեք կարգի՝ բնակա-րանի վարձ, ընթացիկ ծախսեր և կառավարչի ոռոճիկ: «Գործը լաւ տանելու համար, ասում է Թովմաս Շիւն, կառավարչին լաւ պէտք է վարձատրել, որպէսզի նա եկամտի ուրիշ միջոցների հետամուտ չինի»:

Ժողովարանի միջոցները պէտք է գոյանան ան-դամավճարներից և կառավարութիւնից ստացած նը-պատից: Ամերիկայում առատօրէն նպաստում են մանկական ժողովարաններին:

Մանուկներն ևս իրենց մասն են վճարում ան-դամատոմսերով. նրանք, Ամերիկայում ընդունւած սո-վորութեան համաձայն, պարտաւոր են անպատճառ վճարել ներկայացումների, ընտանեկան երեկոյթների և ուրիշ անսպասելի բաների համար արւած ծախսերը: Նրանք ոչ մի ընծայ չեն ստանում. և եթե մանու-կը ժողովարանին պարտապան է միայն առաջնայի մաս մաս վճարով վերջացնի իր պարագայութեան համար:

IV 7/11 1922
* Ա. ԱՅԱՍՏԱ. ԽԱՆԱԿԻ ԽԱՆԱԿԻ ԽԱՆԱԿԻ

«Թովմաս Շիւյի ժող. օրինակնի վահանգութեած և Ստօրհօլմի փողոցային մանուկների ժողովարանը»:

Ստօրհօլմում, ինչպէս և Շվեդիայի միւս մեծ քա-ղաքներում, մանուկների համար զոյութիւն ունեն «աշխատանքի արհեստատուն» (arbetssstugor) կոչւած հիմնարկութիւններ, որտեղ ցանկացողները կարող են գալ և աշխատել: Ցաների համար այդ աներում կան զանազան ձեռարկեստների (սլոյդ) բաժանմունքներ, այսպէս՝ հիւսնութեան, ատաղձագործութեան և կօշ-կակարութեան, իսկ աղջիկների համար՝ կարուծեի, կարկատելու և այլն:

Բայց այս արհետատներում ուրախութեան ու գւարդութեան հետք անդամ չկայ: Դպրոցում աշխատանքները վերջացնելուց յետոյ, մանուկներն այստեղ ևս նորից աշխատանքի են ձեռք զարկում: Մանկական սիրտը, վառ երևակայութիւնը, ընկերական խաղիրի ու հարագիտութիւնների ձգտումն այստեղ չեն գտնում արտայայտելու համար նպաստաւոր պայմանները: Տարօրինակ է տեսնել, թէ ինչպէս այս փոքրիկ մարդիկ, լրտք ու գունատ փոքրիկ դէմքերով, ժրաշանութեամբ զբաղւած են իրենց գործերով: տարօրինակ և է այս, որ կայտառութիւնն ու ծիծալը և նոյն իսկ չարաճընիւթիւնն անդամ բացակայում են այստեղ: Կարծէք թէ այդ մանուկները վաղաժամ ծերացել են և իրենց մատղաշ ուսերին՝ հասակաւոր մարդկանց, հոգսերով ծանրաբեռնած, զլուխներ լինեն կրեմ:

Միւս կողմից էլ Ստօքնօլմի, Գեօտերորդի նման շվեդական մեծ քաղաքների յանցագործութիւնների տարեգրութիւնը հարկադրում է ամեն մէկին միջոցներ գտնել այդ չարիքի առաջն առնելու համար: Աննկարագրելի է երկու սեռի գեռահամերի անբարոյական կեանքի պատկերը: Առանձնապէս աչքի են ընկնում, իրենց շատութեամբ, գողութեան համար դատապարտող պատանիները: Ստօքնօլմում տարեկան 30,000 դատապարտւածների ուղիղ կէսը կազմում է մանուկ սերունդը:

Այս է պատճառը ահա, որ հասունացող սերնդի համար ժողովարանների գոյութիւնն անհրաժեշտ պահած է դառնում:

Շատ հետաքրքիր է տիկ. Միլովի արած պատմութիւնն իր հիմած ժողովարանի սկզբնաւորութեան մասին:

Նա գտնում է մի հարուստ գործարանատէր, որը հետաքրքրում է ժողովարանի զաղափարով և նիւթա-

կան միջոցներ է խոստանում մի այդպիսի ժողովարանի կազմակերպութեան և պահպանութեան համար: Տիկ. Միլովը, ապահովելով իր ձեռնարկութիւնը, իսկոյն ձեռնամուխ է լինում նրա իրագործման: Քաղաքի բանալուներով ընակւած մասում վարձում է մի ընակարան, որը ճաշակով ու հմառութեամբ կահաւորում է: Այսպէս ամեն բան պատրաստելուց յետոյ, մի գեղեցիկ երեկոյ, իր օգնական ընկերունու հետ միասին դուրս է զալիս փողոց և սկսում է հրապուրելով իր մօտ կանչել, անխափիր, այդ ժամին անցնող բոլոր փողոցային մանուկներին, ապա գառնալով դրանցից ամենաաղքատ ու արտաքինով յանդուգն մանուկներին առում է:

—Զէք ցանկանայ տեսնել, թէ ինչպիսի ժողովարան ենք սարքել ձեզ համար:

Դրանցից միքանիսը վախենում ու փախչում են. իսկ միքանի հոգի էլ կարմրելով և գեղեցիկ սանդուխներով բարձրանալով, հետևում են իրենց հրաւիրող այդ երկու կանանց և վճռում են մտնել ընակարանը, երկչում հայեացքները չհեռացնելով զոնից:

Այդ սրտոտները հինգ հոգի էին: Նրանք հետաքրքրութեամբ դիտում են սենեակները, շրջում են ամբողջ շէնքը և լսում են այդ երկու կանանց. Նրանց ցոյց են տալիս արհեստանոցները, զբաղարանը, ներկերն ու վրձիները և ասում են, որ այս բոլորն իրենց համար է պատրաստւած և կարող են այդ բոլորը իրենցը համարել, եթէ միայն ամսական վճարեն 18 կոպէկ անդամատումսի համար:

Շատ հետաքրքիր է անցնում առաջին երեկոն, մի շաբաթ անցնելուց յետոյ՝ արդէն անդամների թիւը հասնում է 15-ի: Այս բոլորը տեղի էր ունենում 1904 թւի աշնանը. իսկ հիմա ժողովարանն ունի 107 մասնուկ անդամներ:

Սեպտեմբերեան մռայլ երեկոներից մէկն էր, երբ ևս այցելեցի այդ ժողովարանը: Ժողովարանը համա-

նը, նստարանները և աթոռները մուգ կանաչ գոյնի): Այստեղի բոլոր փայտէ առարկանները, տիկ. Միլովի առելով, ներկել են իրենք աշակերտները, իսկ մի մասն էլ պատրաստել են:

Պատուհանի մօտ դրած էր կանաչ գոյնով ներկած զբքերի պահարանը, որի մէջ խիտ առ խիտ դասսաւած էին զբքերը, իսկ ներքին մասում գտնուում էին դասական պիտոյքներն ու տետրակները: Ժողովարանում ցանկացների համար կան նկարչութեան, ընթերցանութեան և անզիերէնի դասեր, սակայն այդպիսի դասեր շարաթւայ մէջ քիչ են լինում, որովհեամ մանուկներն աւելի սիրով պարապում են ձեռարեսատով (ալօյդ):

Դահլիճին կից գտնուում էր ընթերցարանը՝ ամբողջովին ներկւած գեղին գոյնով: Մի անկիւնում գտնուում էր շքեղ քանդակներով և հայելիով զարդարւած բուխարին, իսկ միւս անկիւնում՝ զբքերի պահարանը, որի գարակները լցւած էին զբքերով և թերթերով: ամբողջ պատը ծածկւած էր ազգային երկու գրօշակներով: Ընթերցարանի մէջ տեղում գտնուում էր մի մեծ սեղան, որի վրայ շարւած էին նոր թերթեր, իսկ պատերի մօտ կային փոքրիկ սեղաններ, որոնց վրայ զբած էին շախմատի և ուրիշ խաղերի արկդներ: Ամերիկայի նման, այստեղ էլ թղթախաղը և ամեն տեսակի գրամախաղերն արգելւած են:

Այս երկու սենեակն էլ լուսաւորւում էին էլէկտրական լուսով և հանդիսաւոր ու կոկիկ տեսք ունեին, մանաւանդ գեղնագոյն ընթերցարանը: Ռուսաստանում այսպիսի կահաւորւած սենեակներում ապրում են հարուստները միայն և այն էլ մեծ քաղաքներում:

Ընթերցարանից անցանք դէպի մութ խոհանոցը և երկար միջանցքը: տիկ. Միլովը բոլոր տեղերը լուսաւորում էր էլէկտրական լուսով:

բեա զատարկ էր այդ երեկոյեան: Դատարկութեան պատճառը, տիկ. Միլովի ասելով, 1905 թւի ամառւայ և աշնան ընթացքում Շվեդիայի քաղաքներում սկըսւած յամառ գործադուլն էր, որ մինչև անդամ տարածւել էր և գիւղերում: Գործադուլ էին արել շինարական գործի համարեա բոլոր բանւորները, որ և շարունակում էին անդրդւելի յամառութեամբ: Դեռ այս ոչինչ, տեղ տեղ՝ գործարաններում և քարիսանաներում բանկում էին նորանոր գործադուլներ:

Բանւորներն իրենց մանուկների կարիքն ունէին, որովհեամ նրանք ամբողջ ընտանիքով աշխատում էին և իրենց զաւակներին էլ աշխատեցնում էին օրական ապրուստ հայթայթելու համար: Այսպէս ուրիշն անդամներից շատերը աշխատելու և շատերն էլ չընչին ամսականը վճարելու միջոց չունենալու պատճառներով չէին յաճախում կունզսհօլմի ժողովարանը:

Մտանք գահլիճը, այգտեղ աշխատում էին մի խումբ մանուկներ, նրանք նկարում էին տախտակի վրայ, զանազան ձևեր էին կտրատում և նկարներով զարդարում: Դրանք 14 տարեկան, գունատ դէմքերով բանւորների զաւակներ էին, որոնք հագնւած էին աղքատիկ, բայց մաքուր: Նրանք, ըստ երկոյթին, ընտելացել էին իրենց հարուստ բնակարանի հետ և շատ ազատ էին պահում իրենց: Նրանք ուրախ խօսում, ծիծաղում, իրարու էին անցնում. վազում էին դէպի այն սենեակը, որտեղ պահում էին տախտակներ և ուրիշ նիւթեր, և այստեղից վերադառնում էին տախտակի մի կտոր ձեռքներին, նստում էին սեղանի մօտ և սկսում զանակով հուանդիքին աշխատել:

—Ծննդեան տօներին ժողովարանի օգտին վաճառք ենք ունենալու, ասաց տիկ. Միլովը, ահա այդ վաճառքի համար իրեր են պատրաստում:

Այդ ընդարձակ սենեակն ամբողջովին ներկւած էր կանաչ գոյնով (պատերը բաց կանաչ, իսկ ամբու-

Միջանցքում բացւում էր երեք դուռը. մէկը գիշեալին կից՝ ձեռարւեստի նիւթերի պահելու սենեակինն էր, իսկ միւս երկուսը՝ կօշկակարութեան և խոզանակներ պատրաստելու արհեստանոցներինը, կօշկակարութեան արհեստանոցում աշխատում էին մի կարութեան արհեստանոցում աշխատում էին մի խումբ մանուկներ. ծեր վարպետը մեծ ակնոցները դրած՝ մանուկներից մէկին ցոյց էր տալիս կօշիկ կարելու ձեր. Պատից կախած էին աշխատանքի հերթացուցակը (որովհետև բոլոր ցանկացողները, պեղի սղութեան պատճառով, միաժամանակ չէին կարող աշխատել) և արհեստանոցում գտնած իրերի ցուցակը. Ամեն անգամ աշխատանքը վերջացնող խումբն այդ ցուցակի համաձայն աւագին է յանձնում բոլոր գործիքները. Տիկ. Միլովի ասելով, իւրաքանչիւր անդամ կարող է իր տանեցիների հին կօշիկները բերել այստեղ և կարկատել:

Այստեղից անցանք խողանակների արհեստանոցը. Այս անգամ այստեղ հերթական պարապմունքներ չկային, միայն երկու մանուկ, որպէս սիրողներ, շտապշտապ խողանը փաթաթում էին երկաթէ թելերով և ամրացնում էին փայտի կոռորներին, որոնցից ապա խողանակներ պէտք է պատրաստէին: Ցոյց տւին խողանակներ պատրաստի խողանակներ, որոնք խնամքով և սե խողանից պատրաստած գործեր էին:

—Խողանակի փայտէ մասերն ևս պատրաստում և ներկուում են մեր ատաղձագործարաններում,

—Հապա, ի՞նչ էք անելու այսքան խողանակները, վաճառելու էք արդեօք, հարցը ես:

—Ոչ, զրանք ևս պատրաստած են Ծննդեան տօներին տեղի ունեցող վաճառքի համար, պատասխանեց տիկ. Միլովը:

Մենք վերապարձանք գանիճը, ուր արդէն բաւական մարդ էր հաւաքւել, Դրանց մեծ մասը զրադւած էր վաճառքի համար փայտից զանազան իրեր

պատրաստելով: Մի մանուկ հիանալի կերպով տախտակի վրայ նկարում էր զարդեր՝ դուրս կտրելու համար: Մի ուրիշը՝ ներկի մէջ թաթախած մատներով, ներկում էր տախտակից պատրաստած իրեր: Անցնելով մի կողմը՝ մենք նստեցինք:

—Տեսնում էք ինչպիսի հասարակութիւն ունենք, խօսել սկսեց տիկ. Միլովը.—սրանք բոլորն էլ չքաւոր և չնչին ոռձիկով աշխատող բանորների զաւակներ են, Մենք առաջնորդում ենք Թովմաս Շիւրի կանոններով—անդամ ենք ընդունում ամենայետին, բուն փողոցի մասուկներին, որոնք հայնոյում, ծխում և հարբեցողութեամբ են պարապում: Օրինակ, հէնց այս մասուկը, որը ձեզ ընդունեց և յայտնեց ինձ ձեր գալուստը, պէտք է տեսնէիք թէ ինչպիսի էր նա, երբ առաջին անգամ մեզ մօտ եկաւ—կոպիտ, հարբեցող, զգւելի, անպատկառ խօսքերի տէր մէկն էր. իսկ հիմա իմ ամենալաւ օգնականս է: Մի տարւայ ընթացքում այսպէս վերածնեց, որ այլևս գժւար է նրան ճանաչել: Եւ գրանք բոլորն էլ այդպէս վերածնուում են այստեղուն լւա յայտնի է գրանց ընտանեկան հանգամանքները. զիտեմ ով ինչ կարիք ունի և ինչն է գրանց կարիք պատճառը. բոլորի հայրերն էլ արբեցողներ են: Ռիմի պատճառը.

Հաճելի տպաւորութիւն է թողնում գեռահամների այս խմբակի ուրախ ու մտերիմ ժամանցը. Նրանք իրենց ընտանիքի ճնշող պայմաններից ազատւելով, հաւաքւում են այստեղ, այս յարմարաւոր տեղում և օգտուում են կատարեալ ազատութեամբ: —Այս զրատախտակի վրայ նրանք զրում են իրենց որոշումները, թէ երբ են նշանակւում զասախօսութիւնները կամ կարեոր նիստերը: Դրանք կատարեալ ինքնավարութիւն ունեն, այսպէս՝ նախագահ են ընտրում նրան, ում որ ցանկանում են, նշանակում են, իրենց ցանկացած պարապմունքները:

—Իսկ ի՞նչպէս էք անցկացնում կիրակի օրերը:

—Տօն օրերին, սովորաբար, տեղի են ունենում

երաժշտութիւն և երգեցողութիւն, իսկ յետոյ պարապում ենք ընթերցանութեամբ։ Զկարծէք թէ միշտ այսպէս քիչ են հաւաքւում, ձեզ արդէն ասացի, որ սրա պատճառը ներկայիս գործազուլն է։ Մօտ օրերս փողոցում հանդիպեցի մեր անդամներից մէկին, պէտք է տեսնէիք, թէ ի՞նչպիսի բերկանքով բարեց ինձ. անդադար հարց ու փորձ էր անում այն մասին, թէ ինչ է կատարւում մեզ մօտ և սաստիկ ցաւում էր, որ գիշերներն աշխատելու ստիպւած լինելով՝ անկարող է ժողովարանը յաճախել։ Այս, զրանց համար այս ժողովարան մի հարազատ ու թանկագին հիմնարկութիւն է։ Շէնքը, ինչպէս տեսնում էք փոքր է և ընդհանրապէս նեղւածք է լինում, իսկ երբ բոլորն են հաւաքում, այն ժամանակ ասեղ ձգելու տեղ չի լինում։ Մանաւանդ շատ մարդ է հաւաքւում հրաւերքներին, որ ժամանակ առժամանակ կազմակերպում են իրենց քոյրերի և ծնողների համար. նրանց հիւրասիրում են, զբաղեցնում են երաժշտութեամբ, երգեցողութեամբ և ընթերցանութեամբ։

— Իսկ ո՞վ է այդ հիւրասիրութիւնների ծախքը քաշում։

— Բոլոր ծախքերը հէնց իրենք հաւասարապէս բաժանում են իրենց մէջ. և հիւրասիրութիւնն էլ, ի հարկէ, ամենահամեստ ձևով է լինում՝ սրճով և սպիտակ հացով։

Տեսնելով, որ մեր ձեռնարկութիւնը յաջողութիւն ունեցաւ և ապագայ է խոստանում, 1905 թ. փետրվարին կազմակերպեցինք ժողովարանի օրհնութեան հանդէսը։ Մեր շուրջը հաւաքւեցին մեր բոլոր երիտասարդ անդամները և նրանք, որոնք իրենց համամակրանքով ու նիւթականով օժանդակում էին ժողովարանի գոյութեանը։ Փառաւոր և ուրախ էր այդ հանդէսը, թերևս դուք ևս հետաքրքրւէք այդ հանդէսը, թերևս դուք ևս հետաքրքրւէք այդ հանդէսին արտասանած ճառով. այս ասելով նա ինձ տւեց մի փոքրիկ բրոշիւր, հաւասականարար իրեն իսկ զրած, իսկ ինքը գործով զուրս գնաց։ Առանձնապէս

հաւանեցի այդ ճառն ամփոփող տողերը, որ և առաջ ենք բերում այստեղ։

«Մեր կանոնազրութեան հէնց սկզբում առաջ մեր ժողովարանի հիմքը կազմում է եղբայրական սիրոյ գաղափարը։ Ի՞նչ ենք վնատրելու այստեղ և ի՞նչ պէտք է ձեռք բերնենք։

Ժողովարանի հիմնադիր անդամներ, գիտէք ինչու համար ոտք գրիք այստեղ... ձեզ հրապուրեց ժողովարանի գաղափարը. դուք ցանկանում էք միատեղ ուրախանալ և միասին զրադւել, օգնել և պաշտապահել միմեանց։ Դուք ցանկանում էք մեծանալ այստեղ քաղաքացիական պարտաճանաչութեան ու ազատութեան զգացմունքներով։ Զեղանից ոմանք էլ եկել են այստեղ որեէ լաւ բան սովորելու, իսկ ոմանք էլ՝ հէնց միայն նրա համար, որ այստեղ յարմար և ուրախ տեղ է. այդպիսիներն էլ չեն սխալւել, որովհետեւ նըրանք այդ բոլորը կդանեն այստեղ և շատ բան կսովորեն իրարից։ Մենք ուզում ենք օգնել միմեանց, իրախուսել և սիրտ տալ վհատածներին։ Մտերմական և տեղին յարմար ասած խօսքը լուսատու ճրագի նման կարող է լոյս սփոնել խաւար հոգու մէջ. բարեկամական և սրտառուշ բարել թշնամուն բարեկամի կարող է փոխել. կատաղած, վշտերից խստացած սիրտը կաշում է սիրալիք վերաբերմունքի առաջ և բացւում է ցոյց տւած սիրոյ առաջ։

Այս երեկոյեան մենք այստեղ մտերմութեան և եղբայրութեան գեղեցիկ դաշն ենք կնքում. թող, ուրեմն, նա օրէցօր ամրապնդւի, թող ձեր մտերմութիւնն նպաստէ այս ժողովարանի բարգաւամճան և միացնէ ձեզ ամբողջ կեանքում։ Մենք պէտք է հաւատանք և օգնենք միմեանց յիշելով, որ մեր նշարանն է թէ. «Շվեդիայի ապագան նրա երիտասարդութեան ի՞չ»։

Շատ թարմ և նոր տպաւորութիւններ ստացայ այդ երեկոյեան կունգնօլմի ժողովարանում. դժւա-

բանում էի բաժանւել այդ շնորհալի մանուկներից, որոնք առանձին սիրով բացատրում և ցոյց էին տալիս ամեն բան և այնպէս ուրախ և ջանասիրութեամբ աշխատում էին: Եւ այս ժողովարանը հիմնել, կեանք է տւել, կարգաւորել ու սարքել ու մի կին, որն իր գաղափարներով սնել ու իր բարութեամբ ջերմացրել է նրան:

Հրաժեշտի ժամանակ տիկ. Միլովը տւեց ինձ և կունգսիօլմի ժողովարանի կանոնադրութիւնը, որի հետ ուզում եմ ծանօթացնել բոլոր ընթերցողներին, որոնց մէջ գուցէ գտնւեն այնպիսիները, որոնք հասարակական կեանքի բարեկաւման համար կարևոր նշանակութիւն ունեցող մանուկների և պատասիների ժողովարաններ հիմնելու գործում հետեւն թովմաս Շիւյի, տիկ. Սեսիլիա Միլովի և ուրիշ գործիչների օրինակին:

V

Կոնցուլմի (Ստորթօլմ) պատակիների ժողովարանի կանոնադրութիւնը.

1

1. Ժողովարանի նպատակն է՝ տարածել եղբայրական սիրոյ գաղափարը և դաստիարակել իր անդամներին, որպէս քաղաքացիների, լուրջ և գիտակցագամներին, որպէս քաղաքացիների, լուրջ և գիտակցագամներին, միանութեան մթնոլորտում՝ ապագայ գործունէութեան համար:

2. Ժողովարանի ղեկավարը մշտական է: Նա ժողովարանի և նրա անդամների առաջադիմութեան համար պատասխանատու է այն անձի առաջ, որի միջոցներով հիմնւած է ժողովարանը և պահպանում է իր գոյութիւնը, այդ պատճառով ղեկավարներն ունեն վեօ-ի իրաւունք: Կողմնակի անձանց համար բոլոր տօնախմբութիւններն անդամները կազմակերպում են

ղեկավարների թոյլտւութեամբ, բոլոր գնուելիք և նւիրաբերած զրբերի ու թերթերի համար պէտք է ղեկավարների հաւանութիւնն ստանալ:

3. Անդամներն իրենց միջից ընտրում են ժողովարանի նախագահ և վարչութիւն. նախագահը կառավարում է բոլոր ժողովները: Նա իրաւունք ունի հեռացնել այն անդամներին, որոնք իրենց անվայել են պահում վարչութեան մէջ: Նա կազմում է մասնագողովներ և արձակում նրանց: Հարկ եղած ժամանակ, նա ներկայանում է որպէս ժողովարանի ներկայացուցիչ. նրա բացակայութեան ժամանակ նախագահի պարտականութիւնները կատարում է օգնականը:

4. Քարտուղարը կազմում է նիստերի արձանագրութիւնները, կարգում է ժողովարանի գործերին վերաբերեալ զեկուցազրերը և վարում է թղթակցութիւնները: Քարտուղարի բացակայութեան դէպքում՝ գործերը կառավարում է օգնականը:

5. Գանձապահը ստանում և պահում է անդամագարները, իր մօտ ունի անդամների անւանացուցակը. Նա է ստանում և արտակարգ մուտքեր, որոնք ստացւում են ծախւած իրերից, ընտանեկան երեկոյթներին վաճառւած տոմսակներից և այլն: Նա պէտք է ժողովարանի իրերը փչացնող անդամից վերցնի իրի արժէքը. իսկ եթէ իրը փչացել է որևէ գերախտ դէպքի պատճառով, այն ժամանակ իրի արժէքը վճարում են բոլոր անդամները հաւասարապէս:

6. Գրադարաննապեսը կազմում է գրացուցակը, տալիս է զրբեր, թերթեր և հետեւում է որ չփչանան: Նա է վարչութեան առաջարկում նոր գնելիք զրբերի և ստանալիք թերթերի ցուցակը, որ և ներկայացնում է ղեկավարին՝ թոյլտւութիւն ստանալու համար:

7. Վարչութիւնը որոշ ժամանակով նշանակում է ժողովարանի համար երկու աւագ:

8. Աւագները հսկում են ժողովարանի ընդհանուր կարգ ու կանոնին, տեղի ունեցող զեղծութերի մասին տեղեկացնում են վարչութեան և հետեւում են, որ կանոնադրութիւնը յարգի և գործադրի: Նրանք հիւրերի հետ վարւում են քաղաքավարի, սիրով օգնում են անդամներին, հոգում են աթոռներ և նստարաններ, հաւաքում են տոմսակները, հսկում են հիւրընկալութեան վրայ և այլն:

9. Վարչութեան անդամներն ընտրւում են կէստարով. ժողովարանի վերջին նիստին վարչութիւնն առաջարկում է իրեն փոխարինող նոր վարչութիւն ընտրել, որից յետոյ իսկոյն կայանում է նոր ընտրութիւնը: Հին վարչութիւնը կարող է վերընտրւել:

10. Վարչութիւնից հեռացած անդամի տնդ անյապաղ ընտրւում է նորը, որը հների իրաւասութեան ժամանակամիջոցը լրանալուց յետոյ, նոյնպէս դադարում է վարչութեան անդամ լինելուց:

11. Ժողովարանի անդամ կարող են լինել 14 տարեկան հասակի մանուկները:

12. Անդամագնարն է ամսական 35 եօրէ (18 կոպ.):

2

1. Այն անդամը, որը թղթախաղով է պարապում, ոգելից խմբչքներ է գործարծում, անպարկեշտ խօսքեր արտասանում կամ հայհոյանքներ ու երդումներ է անում թէ ժողովարանի ներսը և թէ դուրսը, այդպիսին ենթարկում է ընկերական դատաստանի: Խստիւ արգելում է ժողովարանում ծխելլ և թքելը:

2. Վարչութեան մէջ մեղաւորի վարքի մասին զեկուցում անելու ժամանակ, եթէ մեղաւորը բացակայում է ժողովարանից, այդ դէպօւմ պարտաւոր է շուտափոյթ ներկայանալ: Եթէ առանց յարգելի պատճառի անուշաղիր կթողնէ ընկերների հրաւերը և չի

ներկայանայ, այն ժամանակ նրա բացակայութեամբ նշանակած օրը քննութիւնը կկայանայ:

3. Դատավարութիւնը կատարում է վարչութիւնը:

4. Ժողովարանի անդամին մեղադրելու համար առնաւզն հարկաւոր են երկու արժանահաւատ վկայ, որոնք կարող կլինեն ճշմարտութիւնն ասել: Եթէ մեղադրանքը հիմնաւոր կտեսնեի, այդ դէպօւմ մեղադրեալն որոշ ժամանակով հեռացում է ժողովարանից:

Եթէ նա կրկին մտնում է ժողովարան՝ նրա արարմունքը մոռացւում է և ներում են նրան:

5. Վարչութեան այն անդամը, որ ժողովարանի վերոյիշեալ պարտադիր կանոններից մէկն ու մէկը զեղծում է, այդպիսին դադարում է վարչութեան անդամ լինելուց և մինչև մի տարի չանցնի՛ չի կարող որիշ որևէ պաշտօն ստանձնել:

6. Այն անդամը, որ երկու ամիո շարունակ անդամավճար չի տալիս, այդպիսին համարւում է հեռացւած և միայն պարտքը վճարելուց յետոյ կարող է կրկին անդամ գրւել:

7. Եթէ անդամը յարգելի պատճառներ ունի անդամավճարը չտալու համար, այն ժամանակ գործը վերջանում է վարչութեան և դեկադարների համաձայնութեամբ:

8. Անձնական գործերի պատճառով ժողովարանից մի ամսից աւելի բացակայող անդամը՝ այդ մասին յայանում է վարչութեան և ազատում է անդամագնարից:

9. Անդամը իրաւունք չունի իր անունը անդամների անւանացանկից հանելու, մինչև որ մնացած անդամագնարը չտայ:

10. Բոլոր տօնախմբութիւնների ծախսերն ընկնում են ժողովարանի անդամների և նրա դեկադարների վրայ:

11. Ժողովարանի զբամարկը գրւում է անդամ-

ների տրամադրութեան տակ, ժողովարանի օգտին գործադրելու համար:

12. Իւրաքանչիւր ամսի առաջին նիստին կարգացում է կանոնադրութիւնը, որպէսզի նոր անդամները ծանօթանան նրա հետ և կատարելու խոստումը տան, որից յետոյ նրանց տալիս են ժողովարանում կրելու համար անդամութեան նշան:

VI

Ստօքհօլմից մեկնելու ժամանակը մօտենալու պատճառով, ննաւորութիւն չունեցայ այցելել մանուկների ուրիշ ժողովարաններ ևս:

Ստօքհօլմում միքանի այդպիսի ժողովարաններ կան, որոնցից տղաների ամենանշանաւոր ժողովարանը գտնուում է քաղաքի, այսպէս կոչւած, «Սետլեմէնտ» (settlements) մասում:

Այս ժողովարանը կառուցւած է անգլիական տղաների ժողովարանների օրինակով, որոնք գտնուում են «Սետլեմէնտ» (settlements) կոչւած մասում:

Ժողովարանը բացւել է 1903 թ. յունարին և գտնուում է վարձած շենքի մէջ, որը բաղկացած է միքանի ընդարձակ սենեակներից, որոնց մէջ են և ժողովարանի գահլիճը, ընթերցարանը, հիւրանոցը և դասարանը: Ժողովարանն աչքի է ընկնում իր ազատասէր ուղղութեամբ և կատարեալ ինքնավարութեամբ: Անդամների առաջարկութեամբ տեղի են ունենում հետեւալ պարապմունքները՝ հաշւապահութիւն, շվեդէրէն և անգլիերէն դասեր, կազմարարութիւն, փորագրութիւն փայտի վրայ: Ժողովարանն ունի լաւ գրադարան, որտեղ գրքերի հետ կան և ամսագրեր և թերթեր. գրքերը կարելի է տուն տանել: Անդամների կարգադրութեամբ նշանակում են առանձին երեկոներ՝ դասախոսութիւններ կարգալու և այլ և այլ հարցերի մասին վիճաբանութիւններ անելու համար:

Այս ժողովարանը ամեն օր բաց է լինում 7-ից մինչև 10-ը, բացի հինգշաբթի օրերից, երբ տարրական դպրոցին կից գտնուող մարմարզական դահլիճում անդամները պարապում են մարմարզագութեամբ: Տօն օրերին ժողովարանը բաց է լինում ժամը 5-ից:

Ամառայ ամիսներին ժողովարանի անդամները կազմակերպում են խմբեր՝ մօտակայ և հեռաւոր տեղեր զբուանքներ կատարելու համար: 1903 և 1904 թւականներին մի բազմանդամ խումբ ճանապարհորդում է բնութեան գեղեցկութեամբ և բնակիչների հնաւանդ սովորութիւններով յայտնի Դալարնէ շրջանը: Այս էկսկուրսիան կատարում է ոտքով և մեծ ու անջնջելի բաւականութիւն է պատճառում բոլոր մասուկներին, որոնք մինչ այդ Ստօքհօլմի շրջակայքից երրէք դուրս չեն եկել:

Նորդուլ-Հատանի ժողովարանի անդամ կարող են գրել 15 տարեկան մանուկները:

Բացի այս՝ Ստօքհօլմում տղաների և աղջկների համար մասնաւոր անհատների և ընկերութիւնների ձեռքով կազմակերպած ուրիշ ժողովարաններ ևս կան:

Այնտեղ գոյութիւն ունի ժողովրդական դպրոցները (որոնք նվեդիայում, ինչպէս յայտնի է, ութամեայ են) աւարտող պատուիլիների եւ դեռահասների նամար գլարճութիւններ կազմակերպող ընկերութիւն: Դրանց համար կազմակերպում են դասախոսութիւններ, գասեր, ընթերցանութիւններ, երաժշտական երեկոներ, զանազան խաղեր, ֆիզիկական վարժութիւններ և այլն: Տեղի են ունենում այնպիսի խելացի գւարձութիւններ, որոնք կարող են ազնւացնել և մօտիցնել նրանց, զարգացնել նրանց գիտական և գեղարվեստական հարցասիրութիւնը:

Այս ընկերութիւնը գոյութիւն ունի 1902 թւից և ունի միքանի ձեւզեր: Իւրաքանչիւր ձիւզ գործում է բոլորովին անկախ, ունի իրեն սեփական կանոնադրու-

թիւնն և իր խնդիրները, որոնց լուծման ձգտում է նա: Բոլոր ճիւղերը կենդանի և անընդհատ յարաբերութիւն ունեն իրար հետ կենդրոնական բիւրօի միջոցով:

Ճիւղերը գտնւում են Ստօքնօլմի բանւորներով բնակւած հեռաւոր թաղամասերում: Դրանցից մեծ մասը օգտառում է դպրոցական շէնքերից, սեփական շէնք չունենալու պատճառով: Այս հանգամանքն իր կնիքն է գնում ժողովարանի կեանքի վրայ, մոտեցնելով նրան դպրոցական կեանքին, այն զանազանութեամբ միայն, որ ժողովարանի կեանքում զւարձութիւնն ու կենդանութիւնն աւելի մեծ տեղ են բռնում:

Սկզբում այս ժողովարաններում ևս մանուկներին հրաւիրում էին ուղղակի փողոցից. Նրանց տրամադրութեան տակ էին գնում դպրոցի սենեակները, Նրանց տալիս էին գրքեր ու խաղալիքներ և օժանդակում էին ժողովարան կազմակերպելու գործին. ապա գործը դրւում էր ինքնավարութեան սկզբունքների վրայ: Այս ժողովարաններում նոյնպէս տեղի են ունենում ընթերցանութիւններ, մոգական լապտերներով. ըէֆերատներ և վիճաբանութիւններ. կազմակերպւում են խաղեր և պարեր, էկսկուրսիաներ, թանգարանների ու գործարանների այցելութիւններ:

Հասունացող մատաղ սերունդը, որ դպրոցում ուսումն աւարտելուց յետոյ գործի է կանգնում արհեստանոցներում և գործարաններում, աշխատանքերը վերջացնելուց յետոյ այսպիսի ժողովարաններում է գտնում հանգստութիւն, հասակակիցների անհոգ շըրջան և հետաքրքիր զւարձութիւններ. այսպիսով նախուսափում է և մոլութիւններից: Ժողովարանում տիրող կատարեալ ազատութեան ոգին և այն հանգամանքը, որ ինքն անդամը հնարաւորութիւն ունի գործունեայ մասնակցութիւն ունենալ ժողովարանի կառավարութեան մէջ, աւելի են շարժում նրա ղէպի ժողովարանն ունեցած հետաքրքրութիւնը և զարգացնում են մատաղ սերունդի մէջ հասարակական տաղանդներին, որոնք սերնդի ապագայ հասարակական գործունէութեան համար պիտանի ունդամներ կարող են լինել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0226294

53 076

